Գագիկ
ԲԱԴԱԴՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

Գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը («Հակաճգնաժամային կառավարում»), ապա մագիստրատուրան («Գործարար վարչարարություն»): Այժմ ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասպիրանտ է: Ուսմանը զուգահեռ, եղել է «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտական խմբի անդամ: Ներկայում «Փարվանյան Քոնսալթինգ» խորհրդատվական ընկերության ֆինանսական տնօրենն է, ինչպես նաև, որպես փորձագետ աշխատում է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ֆինանսատնտեսագիտական վարչությունում: Հեղինակ և համահեղինակ է 15-ից ավելի գիտական հոդվածների:

https://orcid.org/0000-0001-6026-6204

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ՄԻՏՈՒՄՆԵՐ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՇԵՂՈՒՄՆԵՐ

DOI: 10.52174/2579-2989_2022.1-12

Հիմնաբառեր. *անվանական աշխատավարձ, իրական աշխատավարձ, աշխատանքի շուկա, տնտեսական գործունեություն, կանխատեսում*

Յուրաքանչյուր պետությունում քաղաքացիների սոցիալական ապահովության աստիճանը բնութագրող էական ցուցիչ են գործող աշխատավարձերը, որոնցով ուղղակիորեն պայմանավորված է հասարակության բարեկեցության մակարդակը: Ընդ որում, զարգացող տնտեսությամբ երկրներում այս խնդիրն ավելի հրատապ է. անհրաժեշտ է մշտապես ուսումնասիրել և բացահայտել աշխատանքի շուկայում ձևավորված աշխատավարձերը, դրանց հետ կապված խնդիրներն ու լուծման հնարավոր ուղիները: Հոդվածում փորձ է արվել ուսումնասիրելու ՀՀ-ում գործող աշխատավարձերի վիճակը, միտումները և, իհարկե, ոլորտային կառուցվածքը:

Աշխատավարձն անհատի բարեկեցության ապահովման սկզբնական աղբյուրն է, ինչպես նաև աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների հանրագումարը: Աշխատանքի վարձատրությունը և դրան հավասարեցված այլ վճարումները վարձու աշխատողների կողմից փաստացի կատարված աշխատանքի դիմաց դրամական և/կամ բնաիրային արտահայտությամբ հաշվարկված համախառն աշխատավարձն են՝ առանց օրենքով սահմանված պարտադիր հարկերը նվազեցնելու[1]:

Յուրաքանչյուր երկրում աշխատավարձի միջին մակարդակը տվյալ երկրի կենսամակարդակը պայմանավորող էական բնութագրիչ է[2], հետևաբար՝ դրա ցանկալի մակարդակի ապահովումը յուրաքանչյուր սոցիալական

[1] ՀՀ ՎԿ, Աշխատանքի շուկան Հայաստանում, 2021, էջ 293:
[2] Eurostat, Income and living conditions – Overview, https://ec.europa.eu/eurostat/web/income-and-living-conditions/overview, visited on 5.02.2022, 17:15.



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Միջին ամսական անվանական աշխատավարձը 2000-2020 թթ.-ին[3]

պետության պարտականությունն է: Հայաստանի Հանրապետությունը, լինելով սոցիալական պետություն[4], բացառություն չէ:

Աշխատավարձի մակարդակը բնութագրող առաջնային ցուցանիշը միջին ամսական անվանական աշխատավարձն է, որը հաշվարկվում է աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների ընդհանուր գումարը հարաբերելով աշխատավարձի հաշվարկման համար կիրառվող՝ աշխատողների միջին ամսական թվաքանակին[5]: Հայաստանի Հանրապետությունում միջին ամսական անվանական աշխատավարձը 2020 թ.-ին կազմել է 189,716 ՀՀ դրամ, որը Հայաստանի անկախ հանրապետության պատմության ընթացքում արձանագրված ամենաբարձր արդյունքն է: Այս ցուցանիշի բացարձակ արժեքն առավել նպատակահարմար է դիտարկել շարժընթացում (գծապատկեր 1):

Գծապատկեր 1-ի տվյալներից ակնառու է, որ 2000-2020 թթ.-ին ՀՀ-ում միջին ամսական անվանական աշխատավարձը ցուցաբերել է աճի ակնհայտ միտում, մասնավորապես, 2000 թ.-ի համեմատ, 2020 թ.-ին գրանցվել է շուրջ 736%-անոց աճ, իսկ աճի միջին գործակիցն այս ժամանակահատվածում կազմել է 12%: Գրանցված աճը եղել է բավականաչափ կայուն, ինչը տեսանելի է նրանից, որ կառուցված գծային միտումից փաստացի ցուցանիշների շեղվածության աստիճանը գրեթե զրոյական է, քանի որ R^2 ցուցանիշը մոտ 0.98 է: Այս պարագայում նշյալ ցուցանիշի հիման վրա նույնիսկ պարզագույն կանխատեսումները կարող են ունենալ շատ ցածր աստիճանի սխալանք: Հիմնվելով ինտերպոլյացիայի մեթոդի վրա և սահմանելով նշանակալիության 5% միջակայք՝ կանխատեսել ենք նաև միջին ամսական անվանական աշխատավարձն առաջիկա 5 տարիների համար (գծապատկեր 2):

Կանխատեսման արդյունքում պարզ է դառնում, որ 2025 թ.-ին ՀՀ-ում կարելի է ակնկալել միջին ամսական անվանական աշխատավարձի բավական բարձր աստիճանի աճ. մասնավորապես՝ դա կտատանվի 226,304-268,865 ՀՀ դրամի միջակայքում: Նույնիսկ վատատեսական սպասումների պարագայում ՀՀ-ում միջին ամսական անվանական աշխատավարձը 2025 թ.-ին, 2020 թ.-ի համեմատ, կաճի շուրջ 19%-ով, իսկ ահա իրատեսական սպասումների կատարման դեպքում այդ կուտակային աճը կկազմի 31%, ինչը բավականաչափ բարձր ցուցանիշ է:

Որքան էլ որ միջին ամսական անվանական աշխատավարձի միտումները կարևոր են և ուղղակիորեն ցույց են տալիս քաղաքացիների սպասումները բարեկեցության առումով, այնուամենայնիվ, հասարակության տեսանկյունից, առավել կա-

[3] Հաշվարկները կատարել է հեղինակը, տվյալների աղբյուր՝ ՀՀ ՎԿ, Աշխատանքի շուկան Հայաստանում, 1997-2021:
[4] ՀՀ սահմանադրություն, հոդված 1, 6.12.2015:
[5] ՀՀ ՎԿ, Աշխատանքի շուկան Հայաստանում, 2021, էջ 293:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Միջին ամսական անվանական աշխատավարձի կանխատեսումները 2021-2025 թթ.-ի համար[6]

րևոր ցուցանիշ է համարվում իրական աշխատավարձը: Այդ նպատակով հոդվածում անդրադարձել ենք նաև իրական աշխատավարձի ինդեքսին (համաթվին), որը հաշվարկվում է անվանական աշխատավարձի ինդեքսը հարաբերելով նույն (կամ հիմնական) ժամանակաշրջանի սպառողական գների ինդեքսին[7]: Այլ կերպ ասած, դա ցույց է տալիս, թե ինչպես են փոփոխվել հասարակության իրական եկամուտները՝ հաշվի առնելով անվանական աշխատավարձի գնողունակության փոփոխությունը (գծապատկեր 3):

2020 թ.-ին, 2019 թ.-ի համեմատ, ՀՀ-ում իրական աշխատավարձի աճը կազմել է ընդամենը 2.6%, այն դեպքում, երբ անվանական միջին աշխատավարձի հավելաճի տեմպը նույն ժամանակահատվածում եղել է 3.9%: Հարկ է արձանագրել, որ 2000-2020 թթ.-ին իրական աշխատավարձի հավելաճը յուրաքանչյուր տարի նախորդ տարվա համեմատ փոփոխվել է -2.2%-ից +21.6% միջակայքում: Դիտարկված 21 տարիների ընթացքում իրական աշխատավարձի անկում գրանցվել է միայն 2010, 2011 և 2013 թվականներին, իսկ նախորդ 7 տարիներին արձանագրվել է իրական աշխատավարձի ինդեքսի աճ: 2008 թ.-ից սկսած՝ ՀՀ-ում չի արձանագրվել իրական աշխատավարձի երկնիշ աճ: 2000-2020 թթ.-ին իրական աշխատավարձի ինդեքսի փոփոխման միջին ցուցանիշը 7.1% է, 2008-2020 թթ.-ին գրանցվել է 2.5%, իսկ 2014 թ.-ից սկսած՝ 3.1% աճ: Նույնիսկ այս



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Իրական աշխատավարձի ինդեքսը 2000-2020 թթ.-ին[8]

[6] Հաշվարկները կատարել է հեղինակը, տվյալների աղբյուր՝ ՀՀ ՎԿ, Աշխատանքի շուկան Հայաստանում, 1997-2021:
[7] ՀՀ ՎԿ, Աշխատանքի շուկան Հայաստանում, 2021, էջ 294:
[8] Հաշվարկները կատարել է հեղինակը, տվյալների աղբյուր՝ ՀՀ ՎԿ, Աշխատանքի շուկան Հայաստանում, 1997-2021:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

Իրական աշխատավարձի ինդեքսի կանխատեսումները 2021-2023 թթ.-ի համար[9]

ցուցանիշներից է ակնհայտ դառնում, որ իրական աշխատավարձի ինդեքսն ունի նվազման միտում: Սակայն, էական է հասկանալ՝ արդյո՞ք այս տեսանկյունից առկա են հստակ ձևավորված միտումներ, թե՞ ոչ: Այդ նպատակով հաշվարկել ենք միջին քառակուսային շեղում/միջին հարաբերակցությունը, որը ցույց է տալիս, թե միջինի նկատմամբ որքանով են շեղված գրանցված ցուցանիշները, և հետաքրքրականն այն է, որ բոլոր դեպքերում էլ շեղումը բավականաչափ մեծ է: Մասնավորապես՝ 2000-2020 թթ.-ին շեղման գործակիցը կազմում է 98%, 2008-2020 թթ.-ին՝ 116%, և միայն 2014-2020 թթ.-ին է, որ ցուցանիշը համեմատաբար ընդունելի է՝ 46%: Սրանից կարելի է ենթադրել, որ քիչ թե շատ ընդունելի արդյունքներ կարելի է ստանալ՝ հիմնվելով միայն վերջին 7 տարիների ցուցանիշների վրա:

Գծապատկեր 4-ի տվյալներից պարզ է դառնում, որ անգամ հուսալիության համեմատաբար բարձր աստիճան ունեցող շարքի հիման վրա կանխատեսումներ իրականացնելիս իրական աշխատավարձի ինդեքսի որոշակիացված միջակայք հայտնաբերելն անհնար է, և, համաձայն ստացված արդյունքների, 2023 թ.-ի՝ ինտերպոլյացիայի միջոցով կանխատեսվող տատանումները -2.80%-ից +5.49% միջակայքում են, ինչը նույնն է, եթե ասենք, թե շարքն այլ հավասար պայմաններում անկանխատեսելի է. այսինքն՝ առաջիկայում հնարավոր է ակնկալել իրական աշխատավարձի փոփոխության գրեթե բոլոր հնարավոր սցենարների իրականացում, որը, բնականաբար, ցանկալի իրավիճակ չէ:

Բացի աշխատավարձերի փոփոխման միտումների ուսումնասիրությունից, վերջիններիս մասին ավելի համապարփակ տեղեկություն ստանալու համար հարկ է նաև հասկանալ, թե ՀՀ-ում տնտեսական գործունեության յուրաքանչյուր ոլորտում ինչ սպասումներ են առկա, քանի որ ընդհանրացված ցուցանիշները միշտ չէ, որ արտացոլում են ամբողջական պատկերը: Այդ նպատակով դիտարկենք միջին ամսական անվանական աշխատավարձի փոփոխությունները տնտեսական գործունեության խոշոր խմբերում (գծապատկեր 5):

Գծապատկեր 5-ի տվյալներից պարզ է դառնում, որ աշխատավարձի ամենաբարձր մակարդակն արձանագրվել է տընտեսական գործունեության խոշոր խմբերից արդյունաբերության ոլորտում, որտեղ 2020 թ.-ի 4-րդ եռամսյակում գրանցվել է 217,739 ՀՀ դրամի չափով միջին ամսական անվանական աշխատավարձ, որը դիտարկվող ժամանակահատվածի ամենաբարձր ցուցանիշը չէ և, մասնավորապես, 5.2%-ով ցածր է, քան 2019 թ.-ի նույն ժամանակահատվածում արձանագրված ցուցանիշը: Հետագա ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ արդյունաբերական ոլորտի աշխատակիցների աշխատավարձն ըստ եռամսյակների աչքի է ընկնում բավական ընդգծված պարբերա-

[9] Հաշվարկները կատարել է հեղինակը, տվյալների աղբյուր՝ ՀՀ ՎԿ, Աշխատանքի շուկան Հայաստանում, 1997-2021:









ԳԾԱՊԱՏԿԵՐ 5

Միջին ամսական անվանական աշխատավարձն ըստ եռամսյակների և տնտեսական գործունեության խոշոր խմբերի 2018-2020 թթ.-ին[10]

[10] Հաշվարկները կատարել է հեղինակը, տվյալների աղբյուր՝ ՀՀ ՎԿ, Աշխատանքի շուկան Հայաստանում, 1997-2021:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 6

Արդյունաբերական ոլորտի միջին ամսական անվանական աշխատավարձի կանխատեսումները[11]

շրջանային զարգացմամբ, իսկ պարբերաշրջանի «գագաթը», որպես կանոն, յուրաքանչյուր տարվա 4-րդ եռամսյակն է: Այս պարագայում կանխատեսելի է, որ հաջորդ տարիների 4-րդ եռամսյակներում տեղի կունենա նոր «գագաթների» ձևավորում՝ ընդհանուր աճի ուղեկցմամբ: Արդյունաբերական ոլորտում միջին ամսական անվանական աշխատավարձի եռամսյակային՝ ինտերպոլյացիայի կանխատեսումները ներկայացված են գծապատկեր 6-ում:

Հաջորդ ոլորտը, որտեղ արձանագրվել է ամենաբարձր միջին ամսական անվանական աշխատավարձը, շինարարությունն է: Այստեղ 2020 թ.-ի 4-րդ եռամսյակում միջին աշխատավարձը կազմել է 200,454 ՀՀ դրամ: Ի տարբերություն արդյունաբերության, այս ոլորտում միջին ամսական անվանական աշխատավարձի զարգացումը եռամսյակային կտրվածքով չի կրում պարբերաշրջանային բնույթ, այլ ցուցաբերում է առավելապես գծային զարգացում՝ երբեմն հանդիպող անկումներով: Սրա մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ ձևավորված՝ դրական թեքվածությամբ միտումից փաստացի ցուցանիշներն ունեն շեղվածության միջինից ցածր աստիճան. R^2 ցուցանիշը մոտ 0.68 է: Նույն ցածր շեղվածությունն է արձանագրվում նաև կանխատեսումների պարագայում, մասնավորապես՝ յուրաքանչյուր հաջորդ եռամսյակում սպասվում է միջինում 1.1% աճ: Կանխատեսումների ամբողջական պատկերը ներկայացված է գծապատկեր 7-ում:

Հաջորդը դիտարկել ենք ծառայությունները



ԳԾԱՊԱՏԿԵՐ 7

Շինարարական ոլորտի միջին ամսական անվանական աշխատավարձի կանխատեսումները[12]

[11] Հաշվարկները կատարել է հեղինակը, տվյալների աղբյուր՝ ՀՀ ՎԿ, Աշխատանքի շուկան Հայաստանում, 1997-2021:
[12] Նույն տեղում:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 8

Ծառայությունների ոլորտի միջին ամսական անվանական աշխատավարձի կանխատեսումները[13]

ների ոլորտը, որտեղ միջին ամսական անվանական աշխատավարձը 2020 թ.-ի 4-րդ եռամսյակում կազմել է 194,359 ՀՀ դրամ, որն ուսումնասիրվող ժամանակահատվածի ամենաբարձր ցուցանիշն է և 2018 թ.-ի 1-ին եռամսյակի համեմատ գրանցել է 22%-անոց կուտակային աճ: Հարկ է նաև արձանագրել, որ դիտարկվող 12 եռամսյակների ընթացքում գրանցվել է միայն երեք դեպք, երբ միջին ամսական անվանական աշխատավարձն անկում է ապրել: Այսինքն՝ այս ցուցանիշն աճի ակնհայտ միտում ունի, սակայն, միաժամանակ, գծապատկեր 5-ից պարզ է դառնում, որ առկա է որոշակի պարբերաշրջանայնություն, ինչը բնորոշ է նաև կանխատեսումային ցուցանիշներին, միայն թե այս դեպքում, ի տարբերություն արդյունաբերության, անկումներն ավելի մեղմ են: Ծառայությունների ոլորտի միջին ամսական անվանական աշխատավարձի կանխատեսումները ներկայացված են գծապատկեր 8-ում:

Դիտարկող վերջին ոլորտը, որտեղ էլ հենց գրանցվել է ամենացածր աշխատավարձը, գյուղատնտեսությունն է: 2020 թ.-ի 4-րդ եռամսյակում այստեղ միջին աշխատավարձը կազմել է 125,780 ՀՀ դրամ, որը 42%-ով պակաս է արդյունաբերությունում արձանագրված նույն ցուցանիշից: Այսինքն, ըստ ոլորտների, միջին աշխատավարձը բավականաչափ տարբերակված է:

Ինչպես արդյունաբերությունում, այս դեպքում ևս միջին աշխատավարձի փոփոխման միտումը դրական թեքությամբ կոր է, իսկ ցուցանիշների փոփոխությունը կրում է պարբերաշրջանային բնույթ: Սակայն, այս դեպքում պարբերաշրջաններն ավելի հստակ կերպով են ձևավորված. յուրաքանչյուր տարվա 2-րդ եռամսյակում դրանք հասնում են «հատակին», իսկ 4-րդում՝ «գագաթին»: Նման զարգացում, բնականաբար, կարելի է ակնկալել նաև հաջորդող տարիներին: Գյուղատնտեսությունում զբաղվածների միջին աշխատավարձի կանխատեսումները (ըստ ինտերպոլյացիայի և նշանակալիության 5% շեմի) ներկայացված են գծապատկեր 9-ում:

Այսպիսով, ամփոփելով կատարված վերլուծությունը, կարող ենք արձանագրել.

1. ՀՀ-ում միջին ամսական անվանական աշխատավարձն ունի հստակ արտահայտված աճի միտում, և առաջիկա տարիների համար կանխատեսվում է վերջինիս աճ, ինչը, բնականաբար, դրական երևույթ է:
2. Իրական աշխատավարձի պարագայում միտումները հստակ չեն, ավելին, դժվար է կանխատեսել վերջինիս աճ կամ անկում, և նման իրավիճակը, անշուշտ, դրական չէ:
3. Որպես բացասական երևույթ՝ պետք է մատնանշել տնտեսական գործունեության տարբեր ոլորտներում միջին աշխատավարձի տարբերակվածության (դիֆերենցման) բարձր աստիճանը:

[13] Հաշվարկները կատարել է հեղինակը, տվյալների աղբյուր՝ ՀՀ ՎԿ, Աշխատանքի շուկան Հայաստանում, 1997-2021:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 9

Ծառայությունների ոլորտի միջին ամսական անվանական աշխատավարձի կանխատեսումները[14]

4. Տնտեսական գործունեության բոլոր ոլորտներում առկա է անվանական աշխատավարձի հստակ ձևավորված աճի միտում:
5. Գյուղատնտեսության, արդյունաբերության և ծառայությունների ոլորտների պարագայում միջին աշխատավարձի փոփոխությունը կրում է պարբերաշրջանային, իսկ շինարարության ոլորտի դեպքում՝ առավելապես գծային բնույթ:

ՀՀ աշխատաշուկայում ձևավորված աշխատավարձերի համակարգը չի կարելի համարել ամենաարդյունավետը, սակայն, եթե հաշվի առնենք ընդհանուր տնտեսական իրադրությունն ու քաղաքական բնույթի հիմնախնդիրները, այն ամենավատն էլ չէ: Հոդվածում արծարծված խնդիրներն առնվազն ցուցիչն են այն իրողության, որ անհրաժեշտ է գտնել լուծումներ մի շարք ոլորտային և համակարգային հիմնախնդիրների համար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ աշխատավարձի համակարգում արդյունավետ համամասնությունների, միտումների ու ցուցանիշների ապահովումը պարզապես անհրաժեշտություն է հասարակության բարեկեցիկ կյանքի, ինչպես նաև սոցիալական պետության ստանձնած պարտականությունների կատարման տեսանկյունից:

[14] Հաշվարկները կատարել է հեղինակը, տվյալների աղբյուր՝ ՀՀ ՎԿ, Աշխատանքի շուկան Հայաստանում, 1997-2021:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ սահմանադրություն, 6.12.2015:
2. ՀՀ ՎԿ, Աշխատանքի շուկան Հայաստանում, 2021:
3. ՀՀ ՎԿ, Աշխատանքի շուկան Հայաստանում, 2020:
4. ՀՀ ՎԿ, Աշխատանքի շուկան Հայաստանում, 2019:
5. ՀՀ ՎԿ, Աշխատանքի շուկան Հայաստանում, 2018:,
6. ՀՀ ՎԿ, Աշխատանքի շուկան Հայաստանում, 2017:
7. ՀՀ ՎԿ, Աշխատանքի շուկան Հայաստանում, 2016:
8. ՀՀ ՎԿ, Աշխատանքի շուկան Հայաստանում, 2015:
9. ՀՀ ՎԿ, Աշխատանքի շուկան Հայաստանում, 2014:
10. ՀՀ ՎԿ, Աշխատանքի շուկան Հայաստանում, 2013:
11. ՀՀ ՎԿ, Աշխատանքի շուկան Հայաստանում, 2012:
12. ՀՀ ՎԿ, Աշխատանքի շուկան Հայաստանում, 2011:
13. ՀՀ ՎԿ, Աշխատանքի շուկան Հայաստանում, 2010:
14. ՀՀ ՎԿ, Աշխատանքի շուկան Հայաստանում, 2005-2009:
15. ՀՀ ՎԿ, Աշխատանքի շուկան Հայաստանում, 2004-2006:
16. ՀՀ ՎԿ, Աշխատանքի շուկան Հայաստանում, 2003-2007:
17. ՀՀ ՎԿ, Աշխատանքի շուկան Հայաստանում, 2003-2006:
18. ՀՀ ՎԿ, Աշխատանքի շուկան Հայաստանում, 2002-2005:
19. ՀՀ ՎԿ, Աշխատանքի շուկան Հայաստանում, 1997-2003:
20. Eurostat, Income and living conditions – Overview, https://ec.europa.eu/eurostat/web/income-and-living-conditions/overview, visited on 5.02.2022, 17:15.

Gagik BADADYAN
Аспирант кафедры управления, АГЭУ

ФИНАНСОВАЯ СИСТЕМА

ЗАРПЛАТА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ: ТЕНДЕНЦИИ, СТРУКТУРА И ОТКЛОНЕНИЯ

Заработная плата в стране является важным показателем уровня социальной обеспеченности граждан каждого государства, так как напрямую определяет уровень благосостояния общества. Более того, эта проблема имеет более высокую актуальность для развивающихся экономик. Необходимо постоянно изучать и выявлять заработную плату на рынке труда, связанные с ней проблемы и возможные пути решения этих проблем. С этой целью в статье предпринята попытка изучить современное состояние, тенденции и, конечно же, отраслевую структуру заработной платы в Армении.

Ключевые слова: *номинальная заработная плата, реальная заработная плата, рынок труда, экономическая активность, прогноз*

Гагик БАДАДЯН
PhD Student at the Chair of Management, ASUE

FINANCIAL SYSTEM

SALARY IN THE REPUBLIC OF ARMENIA: TRENDS, STRUCTURE AND DEVIATIONS

Salaries in the country are an important indicator of the level of social security of the citizens of each state, as they directly determine the level of welfare of the society. Moreover, this problem has an increasing urgency for developing economies: It is necessary to constantly study and identify salaries in the labor market, the issues associated with them and possible ways to solve them. For this purpose, the paper attempts to study the current state, trends, and of course the sectoral structure of salaries in Armenia.

Keywords: *nominal salary, real salary, labor market, economic activity, forecast*